ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՔԱԼՈՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ԳՊՀ դասախոս
e-mail: kaloyan.manvel@mail.ru

Այս տարին ստիպված ենք անցկացնել «արտակարգ» իրավիճակներում՝ պայմանավորված աշխարհում համավարակով ստեղծված իրավիճակով: Նման պայմաններում բանկային համակարգի համար օրակարգային հարց է կայունության շարունակական պահպանումը՝ միևնույն ժամանակ մնալով բավարար կապիտալացված և իրացվելի: Այս պայմաններում բանկերը ամենօրյա աշխատանք են տանում իրենց հաճախորդների վարկունակության վերականգնման և մյուս հաճախորդներին պատշաճ սպասարկելու ուղղությամբ: Առաջարկելով նոր տեխնոլոգիաներ և հեռահար սպասարկման գործիքներ՝ բանկերը կարողացան սպասարկել իրենց հաճախորդներին՝ ձեռք բերելով նոր հաճախորդներ և գործընկերներ:

Բանալի բառեր: *համավարակ, կապիտալիզացված, լիկվիդացված, վարկունակություն, հեռահար, հաճախորդ:*

Ինչպիսի՞ ազդեցություն է ունեցել համավարակը բանկային համակարգի վրա:

Ինչպես գիտենք, այն իր բացասական ազդեցությունն է ունեցել բոլոր երկրների տնտեսությունների, այդ թվում նաև Հայաստանի տնտեսության վրա, որն էլ, բնականաբար, ազդել է Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի վրա: Չնայած այն հանգամանքին, որ բանկերը կարողացել են մասնակի կերպով հաղթահարել վարկերի ամենամսյա կետանցումներից ծագող հետևանքները՝ իրականացնելով վարկերի ժամանակացույցների վերանայումներ, վարկերի մարումների հետաձգումներ, վարկերի ժամանակացույցների վերակառուցումներ, վարկերի մարումների կամ դրանց մասնակի մարումների երկարաժամկետ հետաձգումներ և այլն՝ այնուամենայնիվ խնդիրը շարունակում է մնալ արդիական: Բանկերը շարունակում են իրենց ամենօրյա աշխատանքը՝ ցուցաբերելով օբյեկտիվ և սուբյեկտիվ մոտեցումներ՝ կապված տվյալ վարկի տեսակից, ձևից, նպատակից և այլն: Սպառողական վարկերին ցուցաբերվել է ընդհանուր մոտեցում. տրամադրվել է կարճաժամկետ վարկային արձակուրդ, կամ էլ մարումները հետաձգվել են մինչև սահմանափակումների ավարտը և այլն: Իսկ անհատ ձեռներեցներին և իրավաբանական անձանց տրամադրված վարկերի հետ կապված՝ բանկերը ցուցաբերել և ցուցաբերում են անհատական մոտեցում: Այդ վարկառուների հետ տարվում է ամենօրյա աշխատանք: Եթե տվյալ բիզնես վարկը պատկանում է այն ոլորտներին, որոնք առավել

շատ են տուժել համավարակի արդյունքում, նրանց տրամադրվում է երկարաժամկետ մարման ժամանակացույց, որպեսզի հնարավորություն ընձեռվի տվյալ հաճախորդին՝ դուրս գալու այն իրավիճակից, որում նա հայտնվել է ոչ իր մեղքով:

Ավանդների ընդունման և վարկերի ձևով դրանց տեղաբաշխման շղթան, որը առևտրային բանկերի հիմնական եկամտի աղբյուրն է, կրելով որոշակի վնասներ կամ զրկելով բանկերին կանխատեսված եկամտից, բերում է բանկերի իրացվելիության կամ այլ նորմատիվների խախտման: Ստեղծված պայմաններում բանկերի առաջնային խնդիրներից է՝ անել առավելագույնը վարկառու հաճախորդներին աջակցելու և ավանդատուներին պատշաճ կերպով սպասարկելու նպատակով: Բանկերն իրենք էլ շահագրգռված են իրենց հաճախորդների վարկունակության վերականգնմամբ, քանի որ միայն այդ ճանապարհով է հնարավոր ապահովել բանկի մյուս հաճախորդների պատշաճ և բնականոն սպասարկումը, և նրանք ստիպված են լինում գնալ որոշակի փոխզիջումների՝ հաճախորդներին առաջարկելով վարկերի պայմանների փոփոխություններ: Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի համագործակցության արդյունքում ձևավորվեցին մեխանիզմներ, որոնց կիրառումը հնարավորություն տվեց անհատական մոտեցումներ ցուցաբերելու վարկառուների նկատմամբ, ինչպես նաև խուսափելու վարկառուների կողմից վարկային պայմանագրով սահմանված վճարումները չիրականացնելու հետևանքով վարկային պատմության վատթարացումից: Կենտրոնական բանկն իրականացրեց որոշակի նորմատիվային փոփոխություններ և կիրառեց այնպիսի գործիքակազմ, որն առևտրային բանկերին հնարավորություն տվեց հաճախորդների համար հայտարարելու այսպես կոչված՝ «վարկային արձակուրդներ»: Ճգնաժամից ավելի քիչ կորուստներով դուրս գալու, ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու, ինչպես նաև հետագա մրցակցությանը պատրաստ լինելու շանսերը ավելի շատ են նրանց մոտ, ովքեր կարող են արագ արձագանքել փոփոխություններին և ճիշտ որոշումներ կայացնել: Տնտեսության մեջ իրացվելիության մեծ ծավալի շնորհիվ բանկերը հնարավորություն ունեցան արագ արձագանքելու համավարակի ստեղծած ռիսկերին: Այնուամենայնիվ, կարելի է արձանագրել, որ բանկային համակարգը կարողացել է հաղթահարել այդ հիմնական դժվարությունները, քանի որ նախորդող տարիներին կատարված աշխատանքի և ճիշտ ռազմավարության արդյունքում խնայված և պահուստավորված միջոցներով այս ընթացքում պարտաճանաչ կատարել է իր առջև ծառացած պարտավորությունները՝ այդ թվում իր ավանդատուների հանդեպ: Այս ժամանակահատվածում տեսանելի դարձավ, թե տնտեսության մեջ ինչ կարևոր նշանակություն և հնարավորություն ունեն առևտրային բանկերը: Համավարակի ընթացքում ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում կառավարությունն իրականացրեց տարբեր միջոցառումներ տնտեսության տարբեր ճյուղերում և տարբեր բնագավառներում՝ խթանիչ և վերականգնողական դրամական աջակցություն տրամադրելով ինչպես քաղաքացիներին, այնպես էլ տնտեսվորող սուբյեկտներին:

Այդ դրամաշնորհները տրամադրվեցին բանկերի միջոցով՝ հասանելի դառնալով պետության ողջ տարածքում: Բանկերում դրանց տրամադրման գործընթացը, սակայն, առաջ բերեց նոր խնդիրներ՝ կապված քաղաքացիներին և տնտեսվարող սուբյեկտներին պատշաճ կերպով սպասարկելու հետ, քանի որ բացի իրենց հիմնական հաճախորդներից, բանկերը պետք է սպասարկեին նաև այդ միջոցառումներից օգտվող քաղաքացիներին ու տնտեսվարողներին: Մարդկանց կուտակումը բանկերում կարող էր դառնալ վարակի տարածման նոր աղբյուր և վտանգել ինչպես իրենց, այնպես էլ բանկի աշխատակիցների առողջությունը: Առկա իրողությանը արագ արձագանքելու նպատակով բանկերը արագ քայլեր ձեռնարկեցին՝ ապահովելով իրենց բնականոն գործունեությունը: Այս փուլում բանկերին օգնության հասավ հաճախորդների սպասարկման ածանցյալ գործիքակազմը, ինչպես, օրինակ, Mobile banking ծառայությունը, Internet banking ծառայությունը, պլաստիկ քարտեր և այլն, որոնք հնարավորություն են տալիս առանց բանկ այցելելու իրականացնել հեռահար սպասարկում: Բանկերի կողմից առաջարկվող հավելվածներով հնարավոր է իրականացնել գրեթե բոլոր գործարքները՝ հաշիվների սպասարկում, ավանդային գործառնություններ, վարկային հայտերի առցանց ուսումնասիրություն և տրամադրում, օգտվել դրամական փոխանցումների համակարգերից և այլն, որոնք հնարավորություն են տալիս առանց բանկ այցելելու կատարել այդ գործարքները: Կառավարությունը և առևտրային բանկերը կոչով դիմեցին և հորդորեցին հաճախորդներին՝ օգտվել բանկերում մինչ այդ էլ գործող հեռավար սպասարկման գործիքներից՝ առանց բանկ այցելելու: Նոր տեխնոլոգիաների և բանկային հավելվածների դերը նշանակալից էր նաև նրանով, որ առկա էին տեղաշարժման որոշակի սահմանափակումներ: Այսպիսով՝ առևտրային բանկերը, օգտվելով առկա հնարավորությունից, ձեռք բերեցին նոր հաճախորդներ և նոր գործընկերներ, հաջողությամբ հաղթահարեցին նաև այդ մարտահրավերները՝ շուտափույթ լուծումներ տալով այդ խնդիրներին: Ընդհանուր առմամբ, սոցիալական ծրագրերի շրջանակում այդ կարճ ժամանակահատվածում առևտրային բանկերի կողմից սպասարկվել են տասնյակ հազարավոր քաղաքացիներ և տնտեսվարող սուբյեկտներ՝ ստանալով սոցիալական աջակցության՝ իրենց հասանելիք գումարները: Նշեմ նաև, որ բանկային համակարգը, որպես տնտեսության շարժիչ ուժ, ոչ մի վայրկյան չի դադարել աշխատել, մեծ ռեսուրսներ են ներդրվել թե՛ աշխատակիցների, թե՛ հաճախորդների անվտանգությունն ապահովելու և պատշաճ սպասարկում իրականացնելու համար:

Հարկ է նշել նաև, որ առևտրային բանկերը դրամական զգալի աջակցություն են տրամադրել համավարակի դեմ պայքարող պետական հիմնադրամներին:

Ինչպես կանխատեսում և ներկայացնում են ժամանակակից հեղինակավոր ամսագրերը, յուրաքանչյուր պետության տնտեսության ապագան՝ կապված իրավիճակից շուտ դուրս գալու, տնտեսական և սոցիալական դժվարությունները հաղթահարելու հետ, կախված է լինելու ներկայիս ժամանակահատվածում տվյալ պետու-

թյան կողմից համավարակը հաղթահարելուն ուղղված ռազմավարության ընտրության ձևից (սահմանափակումներ, արտակարգ իրավիճակ, պետության կողմից տնտեսության տարբեր ճյուղերում ներդրումներ, օգնություն և այլն), ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու իրավագիտակցությունից և վարքագծից, քանի որ յուրաքանչյուրը ցանկացած պահի կարող է վարակվել, դառնալ վարակակիր ու շղթայական ձևով տարածել վարակը, որը նորից կբերի վարակի տարածման և նոր սահմանափակումների, ինչն էլ նորից տնտեսությանը կհասցնի ֆինանսական, տնտեսական, սոցիալական և այլ վնասներ:

Ինչպես ցույց են տալիս վերլուծությունները և վերջին ամիսներին տարբեր երկրներում գրանցված արդյունքները՝ կապված համավարակի հաղթահարման հետ, այն երկրները, որոնք ավելի խիստ սահմանափակումների են գնացել և համավարակի դեմ պայքարի ցուցանիշներով առավել լավ արդյունքների են հասել, տնտեսական առումով ունեն առավել խորը ճգնաժամ, քան այն երկրները, որոնք համավարակի դեմ պայքարի ավելի մեղմ պայքարի ռազմավարություն են նախընտրել և տնտեսական առումով ավելի փոքր ճգնաժամային իրավիճակում են գտնվում: Եվ հակառակը, այն երկրները, որոնք այս համավարակը փորձել են հաղթահարել ավելի փոքր սահմանափակումներով, ունեցել են վարակվածների և մահացության ավելի մեծ թվաքանակ, սակայն տնտեսությանը հասցված վնասը մյուս երկրների համեմատ ավելի քիչ է եղել: Բոլորը հասկանալիորեն փոխկապակցված են իրար, և նախընտրություն տալով ու կենտրոնանալով մի ուղղությամբ՝ տուժում է մյուս կողմը:

Օգտագործված գրականություն

1. The economic Journal
2. Frank Media
3. Rusbase մեդիա կայք
4. Digital Banking Report
5. Banks.am էլեկտրոնային կայք:
6. ՀՀ Կենտրոնական Բանկի պաշտոնական կայք:
7. Հայաստանի բանկերի միության պաշտոնական կայք:
8. ՀՀ Կառավարության պաշտոնական կայք:

THE RESULTS OF BANKING ACTIVITIES DURING THE PANDEMIC PERIOD

KALOYAN MANVEL
GSU Lecturer

We are forced to spend this year in the state of emergency due to global pandemic situation. In circumstances like these, it is very important for the banking system to maintain the sustainable stability while preserving the same level of capitalization and liquidity. In mentioned circumstances banks are working on a daily basis to recover the creditworthiness of their customers and provide proper service to other customers. By offering new technologies and tools for remote service, banks were able to establish service for their customers and acquire new customers and new partners.

Keywords: *pandemic, capitalization, liquidity, creditworthiness, remote, customer.*

РЕЗУЛЬТАТЫ БАНКОВСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ВО ВРЕМЯ ПАНДЕМИИ

КАЛОЯН МАНВЕЛ
Преподователь ГГУ

Мы вынуждены провести этот год в “чрезвычайных” условиях, обусловленных ситуацией со всемирной пандемией. В подобных условиях для банковской системы крайне важным вопросом является продолжительное сохранение стабильности, при этом поддерживая тот же уровень капитализации и ликвидности. В данных условиях банки ведут ежедневную работу по восстановлению кредитоспособности своих клиентов и должному обслуживанию остальных клиентов. Предложив новые технологии и инструменты удаленного обслуживания, банки смогли наладить обслуживание своих клиентов и приобрели новых клиентов и новых партнеров.

Ключевые слова: *пандемия, капитализация, ликвидность, кредитоспособность, удаленный, клиент.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 21.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 01.10.2020թ.: